ՊԵՐՃ ՊՈՕՇԵԱՆՑԻ

ՀԱՄԱՊՕՏ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԹԻՖԼԻՍ

Կ. Մարտիրոսեանցի. | Тип. К. Мартиросіанца

Орбеліановская ул., д. № 12.

1899

ՊԵՐՃ ՊՈՕՇԵԱՆՑԻ

ՀԱՄԱՌՕՏ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԹԻՖԼԻՍ

. Կ. Մարտիրոսեանցի. ‖ Тип. К. Мартиросіанца.

Орбеліановская ул., д. № 1|2.

1899

Дозвол. Ценз. 8 Января, 1899 г. Тифлисъ

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑ

Համառօտ տեղեկագիր նրա գրական եւ հասարակական գործունեութեան.

Պերճ Ստեփաննոսեան Պռօշեանցը ծընուել է Աշտարակ գիւղում, 1837, յունիսի 3 ին։

Նա սկզբնական կրթութիւն ստացել է Իւրեանց գիւղում և Մողնու սուրբ Գէորգայ վանքում։

1851 թուին Ներսէս Ե. Կաթուղիկոսը նրան որդեգրելով՝ բերել է Թիֆլիս իւր հիմնած Ներսիսեան դպրոցը։

1855 թուի մայիսին՝ Պերճ Պռոշեանցն աւարտելով Ներսիսեան դպրոցը՝ նոյն տարուայ սեպտեմբերին ոտք է դրել ուսուցչութեան ասպարէզը՝ իւր Հայրենի Աշտարակ գիւղում։ Միաժամանակ նա կատարել է ձրիաբար տեղական գործակալութեան քարտուղարի պաշտօնը։

1858 թուին տեղափոխուելով Թիֆլիս՝ երկու տարի մայրենի լեզուի ուսուցիչ և վերակացու է եղել Հանգուցեալ Նիկողայոս Տէր Յակոբեանցի նորաբաց մասնաւոր դպրոցում, որ վերջերքը վերածուեց մասնաւոր գիմնազիայի։

1859 թուի, ապրելի 18-ին՝ լոյս տեսաւ «Մեղու Հայաստանի» լրագրում Պռոշեանցի բաւական երկար չափածոյ բանաստեղծութիւնը «Առ անձկալին Շու-

շան դուստր Վարդանայ» վերնագրով։

Այս բանաստեղծութիւնն է Պերճ Պռոշեանցի անդրանիկ գրական վաստակը։

1860 թուի սկզբից՝ «Կռունկ» ամսագրի լոյս տեսնելու առաջին օրից, մինչև 1863 թուի սկիզբը՝ Պռոշեանցն աշխատակցում էր «Կռունկին» և վարում էր խմբագրի օգնականի և սրբագրչի պաշտօնը։

«Կռունկի» առաջին համարից սկսուեց տպուել Պռոշեանցի «Սօս և Վարդիթեր» անդրանիկ վէպը։

Այդ տարիներումն էր, որ Պռոշեանցը հիմնեց Թիֆլիսի, որով և ամբողջ Կովկասի Հայոց աղջկանց կանոնաւոր անդրանիկ դպրոցը «Գայիանեան» անունով, մասնակցութեամբ Սիմէօն քահանայ Ղմշկեանի և

հողաբարձութեամբ հանդուցեալ տիկին Եղիսաբեթ Յովհաննիսեանի։

Մինչև այդ ժամանակ՝ մասնաւոր տներում մի քանի տիկիններ ձեռագործի հետ ուսուցանում էին վրացերէն, գուցէ և հայերէն ընթերցանութիւն։ (1)

Նոյն վաթսնական տարիների ընկրզբներումն էր, որ Պռոշեանցի նախաձեռնութեամբ սկիզբը դրուեց Թիֆլիսում՝ քաղաքային թատրոնի բեմի վրայ հայ ներկայացումներին։ (2)

---

1) Այս անդրանիկ „Գայիանեան“ դպրոցը էր պէտք է շփոթել վերջին տարիներս փակուած Թիֆլիսի Մողնու եկեղեցու գաւթում գտնուած „Գայիանեան“ աղջկանց ուսումնարանի հետ, որ բացուեցաւ եօթանասնական թուականներին։

2) Տես պ. Ա. Թարխանեանցի խմբագրութեամբ հրատարակուող „Թատրոն“ հանդէս № 1. 1893 թ.

Մինչև այդ ժամանակ՝ մասնաւոր տներում և Ներսիսեան դպրոցի դահլիճում կատարուել էին մի քանի ներկայացումներ հայ լեզուով։

1863—64 ուսումնական տարեշրջանում Պռոշեանցը Հայոց լեզուի և գրականութեան ուսուցիչ և տեսչի օգնական էր Ղուշուայ թեմական Հոգևոր Դպրանոցում։

Այս ժամանակ՝ նա հանգուցեալ տիկին Մարիամ Հախումեանցի գործակցութեամբ՝ նախաձեռնող եղաւ Ղուշուայ հայ աղջկանց անդրանիկ դպրոցին։

1867—68 թուերին Պռոշեանցը տեսուչ և ուսուցիչ էր Ազուլիսի տղայոց դպրոցին, որ հիմնովին բարեկարգ դպրոցի վերածեց։

Պռոշեանցը հիմնեց Ազուլիսի աղջկանց

ծխական դպրոցը, բայց իբրև հեղինակ Ագուլեաց դպրոցների բացման գրքոյկի՝ նա այդ գործողութիւնը կամովին վերագրել է Ագուլեաց Հասարակութեանը։ (1)

Պռոշեանցի խորհրդով և հսկողութեամբ շինուեցան Ագուլիսի «Թովմայ առաքեալի» վանքի գաւթում չորս ճեռք ուսուցչական հոյակապ բնակարաններ և լրացուեց դպրոցի շէնքը։

Պռոշեանցի անմիջական մասնակցութեամբ երկու շաբաթի ընթացքում 25000 ռուբլի նուէր ժողովուեց Ագուլիսի մէջ յիշեալ երկու սեռի ուսումնարանների ապահովութեան համար։

---

1) Մինչև այդ ժամանակ՝ Ագուլիսում պ. Հայրապետ Քալանթարեանցն ունէր իւր տանը մասնաւոր երկսեռ դպրոց։

1868 թուի ամառը՝ Պռոշեանցը մընալով իւր ծննդավայր Աշտարակում՝ օգնութեամբ և մասնակցութեամբ տեղւոյն հաշտարար դատաւոր մեծ. պ. Մարկոս Գոլուխանեանցի բարեկարգեց և հոգաբարձական սիստեմի վերածեց Աշտարակի ծխական դպրոցը, որի տեսչութիւնը պատրաստակամութեամբ յանձն առաւ պ. Գոլուխանեանցը՝ դրամական նուիրատուութիւն ևս չխնայելով իւր կողմից։

1872 թուին Պռոշեանցը հրաւիրուեց նոր սկսուելիք «Մշակ» լրագրին աշխատակից անդամ։ (1)

---

1) Մշակի առաջին տարիների աշխատակից լինն անդամները՝ խմբագիր հանգուցեալ Գրիգոր Արծրունու նախագահութեամբ՝ կազմել էին խմբագրութիւն՝ ձայների հաւասարութեան իրաւունքով։ Նոքա բոլորեքեան կոչւում էին խմբագիրներ որոշ

1876 թուին Պռոշեանցը բաց արեց Աստրախանում թաղական ծխական երկսեռ դպրոց։

1877 թուին աշխատակից անդամ և սրբագրիչ էր «Փորձ» ամսագրին։

1879 թուից մինչև Հայ դպրոցների առաջին փակումը (1885)՝ Պռոշեանցը վարում էր Երևանի թեմի և Կարսի վիճակի թեմական տեսչութեան պաշտօնը։

Այդ ժամանակները նա բացել է բաւականին թուով գիւղական ծխական դրպ-

մասերի։

Սոքա էին՝ինքը խմբագիրը՝ Գրիգոր Արծրունին, Պօղոս Իզմայէլեանց՝ (նախկին քաղաքագլուխ)՝ Վասիլ Զահվէրդեանց, Ստեփաննոս Պալասանեանց, Մկրտիչ Ամրիկեան, Յակոբ Մէլիք—Յակոբեանց (Ռաֆֆի)։ Հանգուցեալներ։ Գէորգ Զմշկեան, Պերճ Պռոշեանց և Նիկողայոս Լալայեանց, որոնք կենդանի են։

ղոցներ։ (1)

Այդ ժամանակն էր, որ հոգելոյս Գէորգ Գ. Կաթուղիկոսի հրամանաւ Պռոշեանցն աշխարհաբարի վերածեց սուրբ Աւետարանը, որ ազգանուէր Հայրապետը միտք ունէր տպելու և ժան գնով տարածելու ամբողջ ռուսահայոց մէջ։ Մահն արգելեց մեծագործ Կաթուղիկոսին իրականացնելու իւր օգտաւէտ նպատակը։

Ս. Աւետարանի թարգմանութեանն ի վարձատրութիւն՝ Պռոշեանցն արժանացել է Գէորգ Կաթուղիկոսից Աստուածաբանութեան մագիստրոսի տիտղոսի։ Պռոշեանցը նուէր է ստացել վեհից նրա 35

1) Պռոշեանցի տեսչութեան օրոք՝ Երևանի և Կարսի թեմերում կային 159 մեծ ու մանր ծխական դպրոցներ։

տարի գործադրած արծաթեայ ջուր խմելու գաւաթը՝ մի արծաթեայ մատուցարանի հետ։

Հայ ծխական դպրոցներից յետոյ՝ կարճ ժամանակ Պռոշեանցն ուսուցիչ է եղել Երևանի Հոգևոր դպրանոցում։

1887 թուից մինչև 1898 թուի սեպտեմբերը՝ Պռոշեանցն ուսուցիչ էր Թիֆլիսի Ներսիսեան Ազգային Հոգևոր Դպրանոցում։

1889 թուից՝ «Մուրճ» ամսագրի ընկերակցութեան առաջին երկու տարին, Պռոշեանցն եղել է նոյն ամսաթերթի խմբագրութեան աշխատակից անդամ։

Այդպիսով ահա քառասուն եւ հինգ տարի է, որ Պերճ Պռոշեանցը գործում է ինչպէս մանկավարժ և քառասուն տարի է, որ նա գրում է հարազատ մի գրեթէ ոչ մի գրքոյկ ու ձախողած չի մնա=

դարում գրելուց:

Պռոշեանցն աշխատակցել է «Մեղու Հայաստանի», «Կռունկ Հայոց աշխարհին» (*), «Մշակ» (*), «Փորձ», «Աղբիւր», «Նոր-Դար» «Երևանի Յայտարութիւններ» (*) «Տարազ» (*), «Արարատ», «Արձագանք», «Մուրճ» (*), «Հանդէս Գրականական», «Արաքս», «Թատրոն» (*) և «Լումայ» պարբերական թերթերին և հանդէսներին (1), որոնց էջերում բազմաթիւ են Պռոշեանցի յայտնի և կեղծանուն երկերը, պատկերները, վէպիկներն և հրապարակախօսական յօդուածները:

Առանձին հրատարակութիւններով լոյս

---

1) Աստղանիշ պարբերական թերթերին Պռոշ-

են տեսել Պռոշեանցի հետևեալ աշխատութիւնները.

Սօս եւ Վարդիթեր՝ վէպ՝ տպուած առաջին անգամը 1860 թուին «Կռունկ» ամսագրի մէջ և առանձին գրքերով՝ 600 օրինակ։ Երկրորդ տպագրութիւնն էր 1887 թուին՝ 1200 օրինակ։ Այժմ սպառուած է։

Աղասի՝ թատերգութիւն՝ «Կռունկի» մէջ և առանձին գրքերով. 1863 թ. 600 օր. սպառուած։

Ղարաբաղի «Մարիամեան» աղջկանց դպրոցի բացումը՝գրքոյկ. 1864 թ. սպառ.

Ագուլեաց երկսեռ դպրոցների բացումը՝ գրքոյկ՝ 1867 թ. 800 օր. սպառուած։

Կռուածաղիկ՝ վէպ՝ «Փորձ» ամսաթերթի մէջ և առանձին գրքերով, 1891 թուին՝ 1200 օրինակ։

Երկրորդ տպագրութիւնն եղել է 1897 թուին, 1200 օրինակ։

Հացի խնդիր՝ վէպ՝ «Փորձի» մէջ և առանձին գրքերով՝ 1200 օր. սպառուած է։ Թարգմանուած է գերմաներէն։

Շահէն՝ վէպ՝ «Փորձի» մէջ և առանձին գրքերով՝ 1200 օրինակ, 1883 թ. սպառուած է։

Ցեցը՝ վէպ՝ «Մուրճ» ամսագրի մէջ և առանձին գրքերով, 1200 օր. 1889 թ։

Բղէ՝ վէպ՝ «Մուրճ» ամսագրի մէջ և առանձին գրքերով, 1200 օր. 1890 թ.

Սկիզբն երկանց՝ վէպ՝ «Տարազի» մէջ և առանձին գրքերով. 1500 օր. 1892 թ.

Ցուշիկները՝ 1200 օրինակ. 1894 թ.

Աղօթագիրք հայ զինուորների համար։

Նա՝ (պատկեր), 1896 թ. 1200 օր.

Միքէլ աղենց Աբդիլը՝ (պատկեր) 1896 թ. 1200. օրինակ։

Աբցիզչի՝ (պատկեր), 1896 թ. արտատպուած «Արձագանք» լրագրից. 1200 օրինակ։

Պռօշեանցի թարգմանական վաստակներն են.

Երկու խօսք համբարի մասին՝ Պետրոս Զանշեանցի։

Ներքին կեանք հին Հայաստանի. Կ. Եղեանցի։

Սուրբ Աւետարանը.

Զինուորի առողջապահութիւնը։

Զինուորական պարտաւորութիւններին վերաբերեալ չորս գրքոյկներ։ (1)

---

1) Աղօթագիրքը; Զինուորի առողջապահութիւնը և Զինուորական պարտաւորութիւններին

Ցարութիւն Արարատեանցի կեանքը։

Կովկասի գերին. Լ. Տոլստոյի։

Երան չը հասկացան. կամ Երկու եղբայր. Մոնգոմերի։

Դաւիթ Կոպպերֆիլդ. Դիկկենսի։

Մանկութիւն եւ պատանեկութիւն. Լ. Տոլստոյի։

Խորամանգ աղուէս. (փոխադրութիւն)։

Մանչուկն ու Կուտիկը. (փոխադրութիւն)։

վերաբերեալ չորս գրքոյկները յանձնել է Պուշեանցին կազմելու և թարգմանելու և տպագրել է իւր ծախքով՝ հայ զինուորներին ձրի բաշխելու համար՝ հանգուցեալ գնդապետ Ալեքսանդր Մելիք—Հայկազեանցը։ Աղօթագիրքը տպագրել է Մաքսիմ կաթուղիկոսի հրամանաւ և թոյլատրութեամբ։

ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Ջեսսիկայի առաջին աղօթքը.

(Վերջին ութ թարգմանական աշխատութիւնները կատարուած են Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութեան յանձնարարութեամբ, որոնցից երեքը դեռ մամուլի տակ են)։

Հետևաբար՝ Պռօշեանցի բոլոր հատորներով վաստակների և թարգմանութիւնների թիւն երեսուն և մէկ հատ է։

Բացի տպագրուածներից՝ Պռօշեանցն ունի բաւականաչափ անտիպ աշխատութիւններ—վէպեր և պատկերներ, որոնց թւում յատնի տեղ է բռնում Պռօշեանցի «Յուշիկների» շարունակութիւնը, որ հասցրած է մինչև 1870 թուականի վերջերը։

Պռօշեանցը մտադիր է միատեղ ժողովել իւր մասնաւոր յայտնի և կեղծանուն

կրող յօդուածներն ու հատուածները, որոնք մի քանի ստուար հատորներ կարող են կազմել։

Պերճ Պռոշեանցի ընդարձակ կենսագրութիւնը կարող է լոյս տեսնել իւր «Յուշիկների» հետաքրքիր շարունակութեան մէջ, եթէ հանգամանքները յաջողէ նրան լոյս ընծայել։


ՀԱՅ ԳԻՏ. ԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ՊԵՏԵՐՈՒՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0415194

404.

1770